20 դեկտեմբերի 2012 թվականի N 1603 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի N 73-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշման N 1 հավելվածի ցանկի «0100 Հանրային ծառայություն» բաժինը

«

0101	Ոստիկանական գործ	Ոստիկան	-	6 ամիս	-	-

»

տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով.

«

0102	Պահնորդական գործ	Պահնորդ	2 տարի 4 ամիս	4 ամիս	4 ամիս	-
0103	Թիկնապահական գործ	Թիկնապահ	3 տարի	1 տարի	1 տարի	-

»:

2. Մինչև 2014 թվականի հունվարի 1-ը նախնական (արհեստագործական) կրթության «Պահնորդական գործ» մասնագիտությամբ առկա ուսումնառության տևողությունը սահմանել առնվազն 2 ամիս, իսկ նախնական (արհեստագործական) կրթության «Թիկնապահական գործ» մասնագիտությամբ առկա ուսումնառության տևողությունը՝ առնվազն 3 ամիս:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ